ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
ավտոպահեստամասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 07.05.2018թ. ժամը 12.00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Վ. Ավետիսյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Բ. Ալեքսանյանը
Հ. Հակոբովը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Պետրոսյանը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 03.05.2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած Հույս-Մոտոր ՍՊԸ, Ժակ և Գոռ ՍՊԸ՝ Մոսէսքո ՍՊԸ, Ֆլեշ Մոտորս ՍՊԸ, ԱՁ Թեմուր Գալստյան ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 27.04.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից armeps համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ Հույս-Մոտոր ՍՊԸ, Ժակ և Գոռ ՍՊԸ՝ Մոսէսքո ՍՊԸ, Ֆլեշ Մոտորս ՍՊԸ, ԱՁ Թեմուր Գալստյան ընկերությունների կողմից էլեկտրոնային փոստով ներկայացվել են /կցվում են/:

2.3 Ղեկավարվելով Կարգի 46 կետով նիստը կասեցվել է 2 աշխատանքային օրով, մասնակիցների կողմից ներկայացված ամբողջական նկարագրերը և գնահատման թերթիկները տրամադրվել են գնահատող հանձնաժողովի անդամներին:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է 11.05.2018թ. ժամը 14.00-ին:

3. Հանձնաժողովն արձանագրեց.

3.1 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ Հույս-Մոտոր ՍՊԸ, Ժակ և Գոռ ՍՊԸ՝ Մոսէքսո ՍՊԸ, Ֆլեշ Մոտորս ՍՊԸ, ԱՁ Թեմուր Գալստյան ընկերությունների ընկերությունների կողմից էլեկտրոնային փոստով ներկայացվել են և համապատասխանում են հրավերի պահանջներին /կցվում են/:

3.2 Սույն թվականի մայիսի 11-ին /հարցումը կատարելու օրվանից հաշված 6-րդ աշխատանքային օր/ Կոմիտեից ստացվել է հարցման մասին տեղեկատվություն, այն մասին որ Հույս-Մոտոր ՍՊԸ և Թեմուր Գալստյան ԱՁ-րի հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել են օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ 11.05.2018թ. էլեկտրոնային եղանակով ծանուցում է ուղարկել առաջին տեղն զբաղեցրած մասնակցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Հաջորդ նիստը նշանակվել է 15.05.2108թ.:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է 15.05.2018թ. ժամը 16.00-ին:

Նիստին ներկա մասնակիցներ՝ Հույս-Մոտոր ՍՊԸ կոմերցիոն տնօրեն Գ. Գրիգորյան

4. Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/

4.1 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի /ամբողջական նկարագրերի/ համապատասխանությունը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.2 Համաձայն Կարգի 44-րդ կետի դրույթների՝ /եթե Կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից/ Հույս-Մոտոր ՍՊԸ և Թեմուր Գալստյան ԱՁ ներկայացրած հայտերը գնահատել անբավարար և մերժել

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.3 Ղեկավարվելով Կարգի 45-րդ կետի դրույթներով՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում Հույս-Մոտոր ՍՊԸ և Թեմուր Գալստյան ԱՁ տվյալները չեն ներկայացվի լիազորված մարմին, եթե մասնակիցները կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացնեն մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ 18.05.2018թ.: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.3 Ղեկավարվելով Կարգի 45-րդ կետի դրույթներով՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում Հույս-Մոտոր ՍՊԸ և Թեմուր Գալստյան ԱՁ տվյալները չեն ներկայացվի լիազորված մարմին, եթե մասնակիցները կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացնեն մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ 18.05.2018թ.: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.4 Համաձայն Կարգի 48 կետի 2-րդ ենթակետի՝ պահանջել 27.04.2018թ. թիվ 2 բացման նիստի արձանագրության 5.1-ի բ) պարբերությամբ սահմանված 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցներից՝ 1,3,4,5,7,9 չափաբաժիններով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ նշված չափաբաժիններով առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագրերը/:

- Ժակ և Գոռ ՍՊԸ՝ 3,5,9 չափաբաժիններով
- Մոսէքո ՍՊԸ՝ 4,7 չափաբաժիններով
- Ֆլեշ Մոտորս ՍՊԸ՝ 1 չափաբաժնով

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.5 Հաջորդ գնահատման նիստը հրավիրել ս.թ. մայիսի 21-ին, ժամը 12.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Ավետիսյան

անդամներ՝ _____ Բ. Ալեքսանյան

_____ Հ. Հակոբով

_____ /Ա. Պետրոսյան/

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան